ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N17 20 հունվարի 2021թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Ի պատասխան Ձեր 17.01..2020թ թիվ 01/107,3/00404-20 գրության կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ավագանու 21.01. 2021 թվականի հրավիրված արտահերթ նիստի մասին տեղեկացումը, նիստի օրակարգը, նիստում քննարկվելիք հարցերի վերաբերյալ ընդունվելիք որոշումների նախագծերը:
Առդիր՝ 4 թերթ :

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Քարաձոր համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Քարաձոր	Ավագանու արտահերթ նիստ	21.01.2021թ	12:00	Քարաձորի համայնքապետարան

Նախագիծ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

21. 01. 2021թ . գ.Քարաձոր

1. ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. .ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի «ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21 -Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Հ. Ռոստոմյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Քարաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 21-ի արտահերթ նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1.Քարաձոր համայնքի ավագանու 2021 թվականի հունվարի 21-ի -ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

2. Քարաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Քարաձոր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Համայնքի ղեկավար Հրանուշ Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան

ՆԱԽԱԳԻԾ -5Ա

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի «ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 28-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. Հ. Ռոստոմյան/

եկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5–րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով և 34-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Քարաձոր համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Քարաձոր համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 28-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ղեկավար՝ Հրանուշ Ռոստոմյան

Որոշման նախագիծը նախապատրաստեց
Հրանուշ Ռոստոմյան